ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ս.Սպանդարյանի անվան հ. 24

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան Պարոնյան 3 Հեռ. 584721/31/

----------N 136

<<19>> դեկտեմբեր 2022թ.

ՀՀ ԿԳՄՍ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սաֆարյան.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ դպրոցում առաջացել է աշխարհագրության աշխատատեղ, որի պատճառով անհրաժեշտություն է առաջացել հայտարարելու աշխարհագրություն առարկայի ուսուցչի թափուր տեղի մրցույթ: Կից ներկայացնում ենք մրցույթի մասին հայտարարությունը և խնդրում այն հրապարակել ՀՀ ԿԳՄՄՆ կայքէջում:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ Ս.ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 24 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ 02547281

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT

Մուտք N V-80440-2022

«20» 12 2022

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),1 լուսանկար 3x4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են կարգի 14-րդ կետի համաձայն՝ դեկտեմբերի 21-ից մինչև հունվարի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} –ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. Հունվարի 9-ին՝ ժամը 14^{00}–ին, Երևանի Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Պարոնյան 3:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 58-47-21 հեռախոսահամարով: